

ՈՒՍԵՆՆԿԵՐԸ, 30 (ՌՅԹԸԸ)- Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Բիլնթրն հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցած է Իսրայէլի վարչապետ Էհուտ Պարաքի հետ, հաղորդեց Սպիտակ Տան բանբեր Ճէյք Սիուրթը երկէ: Ան ըսաւ, որ երկու ղեկավարները 35 վայրկեան խօսած են. Բիլնթրն առաւելաբար արծարծած է պաղեստինեկախարայեան վերջին օրերու բախումներուն հարցը: Սիուրթը կ'ըսէ, որ չի գիտեր, թէ Բիլնթրն Արաքաթի հետ այլ խօսակցութիւն պիտի ունենայ, կամ ոչ: Բիլնթրն - Պարաք խօսակցութիւնը տեղի ունեցած է իսրայէլացի վարչապետին Քնեսէթին մէջ ելոյթ ունենալէն առաջ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԳՈՒՄԱՐԵՑ ՆԻՍՏ ՄԸ ԵՒ ՔՆՆԱՐԿԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵԼԻՔ ԻՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Կառավարութիւնը բեկ երեկոյեան գումարեց ժողով մը, քննարկելու համար խորհրդարանին ներկայացուելիք իր յայտարարութիւնը, որուն նախագիծը պատրաստած էր վարչապետ Ռաֆիք Հարիրիի գլխավորած նախարարական յանձնախումբը:



Նախագահ Լահուտ կը գլխավորէ ժողովը:

Են նախագիծին վերաբերեալ իրենց նկատողութիւնները, որոնք որդեգրած են: Յայտարարութիւնը այսօր պիտի յանձնուի

ՄԻՆՉ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՆ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԱՅԻՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԱՐԱՑԱԹ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՄՈՒՊԱՐԱՔԻ ՀԵՏ, ԻՍԿ ՊԱՐԱՔ ԾԱՌ ՄԸ ԱՐՏԱՍԱՆԵՑ ՔՆԵՍԷԹԻՆ ՄԷՁ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԵՑ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐԸ

Արեւելեան Երուսաղէմի մէջ յարուածութիւնը աւելի սուր դարձաւ երէկ, երբ պաղեստինցի պիւնթրն մը սպաննեց իսրայէլացի մը: Միջադէպը տեղի կ'ունենար այն պահուն, երբ վարչապետ Էհուտ Պարաք կը պատրաստուէր սուր քննադատութիւններու ենթարկուելու խորհրդարանին մէջ, որուն ամառնային արձակուրդը աւարտած է եւ որ երէկ գումարեց իր առաջին նիստը:

Պարաք միասնականութեան կոչ ուղղեց իսրայէլեան կուսակցութիւններուն, որոնց մեծ մասը դժգոհ է վարչապետին խաղաղութեան քաղաքականութենէն: Պարաք Յուլիսէն ի վեր կորսնցուցած է Քնեսէթին մէջ վայելած մեծամասնութիւնը: Մեկնաբաններ սակայն անհաւանական կը նկատեն, որ Պարաքի փոքրամասնութիւններու կառավարութիւնը տապալի: Ծայրայեղական կրօնական Շաս կուսակցութիւնը խոստացած է առնուապէս մէկ ամիս Պարաքի դէմ չքուէարկել խորհրդարանին մէջ:

Խորհրդարանի նիստին նախօրեակին, Պարաք փորձած էր ապահովել դաշնակցութիւն մը Լիքուտի նման մեծ կուսակցութեան մը, սակայն չէր յաջողած համոզել անոր ղեկավար Արիէլ Շարոնը, որ ծանր պայմաններ դրած էր մասկալմէյու համար Պարաքի ստիպողական վիճակի ազգային միասնականութեան կառավարութեան: Պաղեստինցիներ եւ ճախակողմեան իսրայէլացիներ արդէն մտահոգութիւն յայտնած էին, Շարոնի վերադարձը խաղաղութեան գործընթացին համար մահացու հարուած նկատելով:

Մինչ այդ, բախումները երէկ շարունակուեցան եւ այս անգամ, պաղեստինցիներու կողքին արձանագրուեցան նաեւ իսրայէլացի պոռթի:



Պարաք Զենէթին մէջ ճառի պահուն:

Ոստիկանութիւնն ու հիւանդանոցային աղբիւրներ յայտնեցին, որ պաղեստինցի պիւնթայր կրակ բացած է իսրայէլացի երկու պահակներու վրայ՝ սպաննելով մէկը եւ վիրաւորելով միւրը: Ականատեսներու համաձայն, մէկէ աւելի պիւնթայներ մասնակցած են գործողութեան, որ տեղի ունեցած է Արեւելեան Երուսաղէմի մէջ: Պահակները կը հսկէին ապահովագրութեան պետական հիմնարկի մը դիմաց:

Երուսաղէմի միջադէպէն քանի մը ժամ առաջ, իսրայէլացիի մը դիակը գտնուած էր Կիլո հրէական բնակեցման վայրին մօտ: Իսրայէլացիի երկու օրէ կորսուած էր: Անոր մարմինին վրայ դաշնային հարուածներ կային:

Բախումները շարունակուեցան նաեւ Կապալի մէջ, ուր բողոքի ցուցերու ընթացքին վիրաւորուեցան ինը պաղեստինցիներ, որոնց կարգին է ոստիկան մը:

Պարաք վերստին դատապարտեց վայրագ արարքները, դիտել տալով, որ խաղաղութեան առիթը սկսած է կորսուիլ: Պարաք, որ կը խօսէր խորհրդարանի նիստին, խօսքը ուղղելով պաղեստինեան իշխանութեան նախագահ Տասէր Արաֆաթին, ըսաւ որ պէտք է գիտնալ, թէ վայրագութեան ճամբով ոչինչ կրնայ իրագործել: Պարաք աւելցուց, որ իսրայէլացիները միացած են վայրագութեան այլքին դէմ: Ան ըսաւ նաեւ, որ բանակցութիւնները կը կատարուին սեղանի մը շուրջ եւ ոչ թէ փողոցներուն վրայ քարերով եւ փամփուշտներով: Ծար-ը՝ էջ 2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Երէկ Հ.Յ.Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի հրաւերով Սարգսարապատ ակումբին մէջ տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում մը, որուն ներկայ գտնուեցան երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, նախկին նախարարներ եւ երեսփոխաններ՝ Արթուր Նապարեան, Անդրանիկ Մանուկեան, Մելգոն Էպիղաթեան, Սուրէն Խանամիրեան, Ժաք Չուխատարեան, Արրահամ Տէտէեան եւ Նուրիճան Տեմիրճեան: Հանդիպումին ներկայ չեղան նախկին երեսփոխաններ Արա Երեանեան՝ առողջապահական պատճառներով եւ Անտրէ Թապուրեան՝ ճամբորդութեան պատճառով. բայց անոնք կապ հաստատեցին՝ յայտնելով իրենց զօրակցութիւնը խորհրդաժողովի որոշումներուն նկատմամբ:

Ժողովականները նոր կառավարութեան մէջ միայն մէկ նախարարով հայութեան ներկայութիւնը նկատեցին իրաւապրկում հայ համայնքին, որ 24 եւ աւելի նախարար հաշուող կառավարութեան մէջ իրաւունք ունի ներկայանալու 2 նախարարով:

Երեսփոխաններ Մելգոն Էպիղաթեան եւ Անդրանիկ Մանուկեան, որոնք մասնակցած էին Թաէֆի ժողովին, ուր միայն համայնքը նկատի առնուեցաւ իբրեւ Լիբանանի եօթը հիմնական համայնքներէն մէկը, հաստատեցին, որ հայ համայնքը իրաւունք ունի մէկ նախարար ունենալու 14 անդամ հաշուող կառավարութեան մէջ. ինչ որ աւելի կը հիմնաւորէ 30 նախարար հաշուող կառավարութեան մէջ 2 նախարար ունենալու հայ համայնքին պահանջը:

Ժողովականները ընդվզուով արձանագրեցին հայ համայնքին իրաւունքին անտեսումը, համայնք մը, որ փաստած է հայրենիքին եւ օրինականութեան նկատմամբ իր հատարանութիւնը, գործած է սահմանադրական հաստատութիւններու հփօրացման համար եւ ջանք թափած է, որպէսզի Լիբանանը վերակառուցուի եւ բարգաւաճի:

Ժողովականները պահանջ ներկայացուցին նախագահներուն՝ սրբագրելու այս կառավարութեան կազմութեան մէջ պատահած խախտումը եւ երկրորդ հայ նախարար մը նշանակելու, որ կը ներկայացնէ ժողովուրդին մեծագոյն համեմատութիւնը:

Ներկաները նաեւ որոշեցին շարունակել հետեւիլի հարցին եւ գործել տարբեր մակարդակներու վրայ՝ իրագործելու համար հայ համայնքին պահանջները:

ԿԵՐԶԱՐՏ ՇՐԷՕՏԸՐ ՊԵՅՐՈՒԹԵՆ ՄԵԿՆԵՑԱԻ ԱՄՄԱՆ

Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրէօտը երէկ Պէյրութէն մեկնելէ առաջ այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրիի:

Հանդիպումէն ետք Պրրի յայտարարեց, որ Իսրայէլի հետ գերիներու եւ արգելափակելու փոխանակման հարցին հարեանցի ձեւով անդրադարձած են: «Ըսենք, որ Լիբանանն ու դիմադրութիւնը կ'ողջունեն ամէն միջնորդութիւն, որուն շնորհիւ լիբանանեան հողերուն վրայ ձերբակալուած իսրայէլացի պիւնթրները կը փոխանակուին իսրայէլեան բանտերու մէջ արգելափակուած լիբանանցի պատանդներով», ըսաւ Պրրի: Հարցումի մը պատասխանելով պէս նաեւ ըսաւ, որ Շրէօտը ի մօտ նկատած է նման



Շրէօտը եւ Պրրի

միջնորդութիւն կատարելու փափաք, բայց նաեւ վերապահութիւն՝ այս իմաստով յայտարարութիւն կատարելու:

Խորհրդարանի նախագահը ըսաւ, որ Գերմանիա պատրաստ է տնտեսական օժանդակութիւն կատարելու Լիբանանին եւ այս հարցը պիտի քննարկուի լիբանանեան կառավարութեան հետ:

Իսկ ինչ կը վերաբերէ քաղաքական հարցերուն, ապա Պրրի ըսաւ, որ վերահաստատած է, թէ այնքան աւտեն, որ Մապրէի Շրպան կը մնայ բռնագրաւուած, Լիբանանի համար կարելի չէ ՄԱԿի թիւ 425 որոշումը գործադրուած նկատել: «Սաղաղութիւնը երկու կողմերու միջեւ պայմանագրութիւն մը չէ, այլ՝ ընդհանուր մթնոլորտ, շրջանին մէջ վերջնական խաղաղութիւնն այն է, որ կ'ընդգրկէ նաեւ սուրիացիներն ու պաղեստինցիները», ըսաւ Պրրի:

Ժամը 11:00ին, Շրէօտը Պէյրութէն մեկնեցաւ Ամման: Օդակայան ողջերթի գացած էր վարչապետ Ռաֆիք Հարիրի, նախարարներու ընկերակցութեամբ:



Հարիրի եւ Շրէօտը օդակայանին մէջ ողջերթի պահուն:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՁ ԿԱՐԶԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ Կ'ԸՆԴՈՒՆԻ ՊԻԵԼՈՌՈՒՄ ԻՐ ՊԱՇՏՕՆԱԿԻՑԸ

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան երէկ ընդունեց պաշտօնական այցելութեամբ Երեւան մեկնած Պիելորոուի վարչապետ Վլատիմիր Երմոշինը:

Հանդիպումին ընթացքին երկու վարչապետները ընդգծեցին առեւտրական եւ տնտեսական գործակցութեան համար համապատասխան իրաւական եւ օրէնսդրական դաշտի ստեղծման անհրաժեշտութիւնը: Այս իմաստով վարչապետ Մարգարեանի Յուլիսին Մինսք կատարած այցելութիւնը, որուն արդիւնքները երկու երկիրներուն գործակցութիւնը գործնական մակարդակի բարձրացուցած են: Վարչապետ Մարգարեան անհրաժեշտ նկատեց, որ իրաւական հիմքերը ստեղծուելէն ետք, թէեւ փոքր, սակայն յստակ քայլերով կարելի է յառաջանալ գործակցութեան ուղղութեամբ:

Վարչապետ Մարգարեան կարեւոր նկատեց նաեւ Դեկտեմբերին Մինսքի մէջ կայանալիք Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան անդամ երկիրներու նախագահներու եւ վարչապետներու վեհաժողովին քննարկուելիք հարցերու նախապատրաստումը եւ երկու երկիրներու նախագահներուն կողմէ կնքուելիք «Հայաստանի եւ Պիելորոուի միջեւ բարեկամութեան եւ գործակցութեան մասին» պայմանագիրը:

Վարչապետները սնքաւարար նկատեցին երկու երկիրներուն միջեւ առեւտրական եւ տնտեսական գործակցութեան ներկայ իրավիճակը:

Անդրադաշտայնով Հայաստանի վարչապետին օժանդակութեան խնդրանքին՝ Հայաստանի մէջ աննախադէպ երաշտին հետեւանքները յաղթահարելու համար, վարչապետ Երմոշին նշեց, որ հակառակ մեծ դժուարութիւններու, Պիելորոուի պատրաստ է օգնութեան ձեռք երկարելու եւ այս օրերուն կը քննարկուի նաեւ այդ հարցը:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՏԵՅՎԻՏ ՍԱԹԸՐՖԻԼՏԸ



Սաթըրֆիլտ նախագահին մօտ

Հանրապետության նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երկրորդն է այցելությունը Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տէյվիտ Սաթըրֆիլտի. որ յայտնեց, թէ ամերիկեան Քոնկրէսը կը պատրաստուի Լիբանանին տրամադրելու դրամական օժանդակութիւն, որ պիտի յատկացուի հարաւային Լիբանանի, մասնաւորապէս ապատագրուած շրջաններուն:

Նախագահ Լահուտ երկէ նաեւ ընդունեց Քրիստոնէայ Լիկաներու նախագահներու պատուիրակութիւն մը, որ ներկայացուց իր կեցւածքը տիրող վիճակին ու նոր կառավարական կազմին առնչութեամբ:

Նախագահ Լահուտ երկէ նաեւ ընդունեց նախկին նախարար Միշէլ Էտտէն եւ «Շարք» օրաթերթի խմբագրապետ Աուրի Բապին:

ՍՖԷՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ

Մարտիներու Մար Նասրայիս Պուրոս Սֆէյր պատրիարքը երկէ նկատել տուաւ, որ ազգային հաշտութիւնը ցարդ չէ իրականացած եւ քննադատեց կարգ մը անձերու, յատկապէս երիտասարդներու ձեռքադրումը եւ անարգումը:

Պատրիարքը կը խօսէր Լուսիպէ համալսարանի պատուիրակութիւնը ընդունած ատեն: Ան նաեւ ցաւ յայտնեց, որ համալսարանաւարտ երիտասարդները գործ չեն գտներ. կը գաղթեն եւ անոնցմէ միայն քիչերը կը վերադառնան:

Նախկին երեսփոխան Ռշէյտ Խապէն Սֆէյրի հետ տեսակցելէ ետք րասւ. որ նոր կառավարութիւնը բաժնեկցութեան արդիւնք է: «Ժողովուրդը կը սպասէր ազգային համախոհութեան կառավարութիւն մը, բայց իշխանաւորները մարդոց ոչխար կը կարծեն» րասւ ան: Ան նաեւ քննադատեց Շուֆի, Ալէյի, Մէթնի, Բեպրուանի եւ Պեքասի կիսանկախ իշխանութիւնները:

Սֆէյրի այցելած բազմաթիւ նախկին երեսփոխաններ թեր ու դէմ արտայայտութիւններ ունեցան նոր կառավարութեան հասցէին: «Թատամոն» Կուսակցութեան նախագահ Էմիլ Ռահմէ քննադատեց քրիստոնէայ կուսակցութիւններուն կառավարութեանն ղուրս մնալը:

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆՆԵՐՈՒ ՍՏԱՆՁՆՈՒՄ



Անուար Բալիլի եւ Ղազի Արիտի միջեւ փոխանցում

Բազմաթիւ նախարարութիւններու պաշտօնական փոխանցումները շարունակուեցան երկէ նախկին նախարարներէն նորերուն:

Ուժանիւթի եւ շուրի նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուն երկէ նախկին նախարար Սիլվէյման Թրապուլսիէն նախարարութիւնը ստանձնելու ատեն արտասանած իր խօսքին մէջ ընդգծեց կարեւորութիւնը ներդաշնակ կազմի մը, որ կը գործէ քաղաքացիին հարցերը լուծելու, յաւ պաշտօնեաները վարձատրելու եւ սայթաքողները պատժելու:

Ան յայտնեց, որ կառավարութիւնը կարեւորութիւն պիտի ընծայէ պանապան շրջաններու մէջ շրմբարներու կառուցման ծրագիրին:

Նախկին նախարար Թրապուլսի յաշտողութիւն մաղթեց անոր:

Նախարար Խալիլ Հրրաուի նախկին նախարար Ղազի Չալաթէրէն ստանձնեց պաշտպանութեան նախարարութիւնը: Երկու նախարարներ հաստատեցին հայրենիքի սահմաններու պաշտպանութեան մէջ բանակին անկրկնելի դերը:

Տեղեկատուութեան նոր նախարար Ղազի Արիտի նախկին նախարար Անուար Խալիլէն ստանձնեց իր պաշտօնը, հաւաստելով, որ ճիգ պիտի չխնայէ որպէսզի իրանաւեան տեղեկատուութիւնը երկխօսութեան ապտ քեմ դառնայ:

Նախարար Ալի Քանսօ աշխատանքի նախարարութիւնը ստանձնեց նախարար Միշէլ Մուսայէն, յայտարարելով, որ պիտի աշխատի ընկերային ապահովագրութեան վարգացումին ու սենտիքայական շարժումի միութեան համար:

Նախարար Քարամ Քարամ առողջապահութեան նախարարութիւնը յանձնեց նախարար Սիլվէյման Ֆրէնժիէի, որ նկատել տուաւ, թէ «առողջապահական քաղաքականութեան» շարունակական եւ հետեւողական բնոյթը անհրաժեշտ է:

Ֆրէնժիէ երկրագործութեան նախարարութիւնը յանձնեց նախարար Ալի Ապտալլայի, իսկ նախարար Քարամ Քարամ վրօշտրութեան նախարարութիւնը ստանձնեց նախարար Արթիւր Նապարեանէն, խոստանալով շարունակել անոր մշակած ծրագիրները:

Մշակոյթի նախարարութիւնը նախկին նախարար Մոհամէտ Եուսէֆ Պայտունէն անցաւ նախարար Ղասսան Սալամէի:

Պետական վարչամեքենայի բարեկարգումներու պետական նախարար Հասան Շալաթ իր պաշտօնը յանձնեց նոր պետական նախարար Ֆուատ Մաստի, իսկ նախարար Ասատ Տիսպ ընկերային հարցերու նախարարութիւնը ստանձնեց նախարար Միշէլ Մուսայէն:

ԱՐԱՖԱԹ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՄՈՒՊԱՐԱՔԻ ՀԵՏ...

Շարունակուած Ա. Էջէն

Իսրայէլացի արար երեսփոխաններէն ուժանք ժողովարար հէն հեռացան Պարաքի ճառին ընթացքին, իբրեւ բողոք 13 արար իսրայէլացիներու սպանութեան դէմ:

Պաղեստինցի գլխաւոր բանագնաց Սաէպ Ուրալթար դժգոհութիւն յայտնեց Պարաքի արտասանած ճառին մասին: Ան րասւ, որ իօսքը ուղղուած էր աշակողմեան իսրայէլացիներուն, զորս Պարաք կ'ուզէ սիրաշահիլ եւ կառավարութեան անդամ դարձնել:

ԱՐԱՖԱԹ - ՄՈՒՊԱՐԱՔ ԸՆԿՐԻՊՈՒՄ

Պաղեստինեան իշ-

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԱԽԿԻՆ վարչապետ Սէյիմ Հըս երկէ այցելեց Սահմանադրական Խորհուրդի կեդրոնատեղիին եւ խորհուրդի նախագահ Անիս Նասարիներկայացուց իր ունեցուածքին մասին հռչակագիր մը:

Հըս կը գործադրէր ապօրինի հարստացման դէմ պայքարի օրէնքի սյն տրամադրութիւնները, թէ պետական պաշտօնատան մէջ իրենց պաշտօնավարութեան ստանձնումէն եւ աւարտէն ետք երեք ամսուան պայմանաժամ ունին

նման հռչակագրեր ներկայացնելու:

ՇԻՆՆԵՐՈՒ զերագոյն խորհուրդի նախագահ Իւսմ Մոհամէտ Մեհոի Շամսէտին յոյս յայտնեց, որ «համախոհութեան եւ բարգաւաճումի կառավարութիւնը» արժանի կ'ըլլայ իր անունին, ամրապնդելով ազգային հաշտութիւնը եւ թափ տալով երկրի բարգաւաճման երթին:

Նոր կառավարութիւնը արդիւնքն է երեք իշխանութիւններու գործակցութեան, եւ արտայայտութիւնն է ազգային հաշտութեան թելադրած տարապիսի», րասւ ան:

խանութեան նախագահ Եասէր Արաֆաթ երկէ Շարմէլէյի այցելեց, տեսակցութիւն ունենալու համար Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաքի հետ:

Պաղեստինցի պաշտօնատարներ յայտնեցին, որ Արաֆաթի այցելութեան նպատակն է հունին վերադարձնել Եգիպտոսի հետ կապերը, որոնք դժուարութեան բախած էին անցեալ շաբաթ, երբ պաղեստինցի քսան մանուկներ Մուպարաքի դէմ ցուց մը կազմակերպած էին: Մանուկները կ'առաջնորդէին էջ մը, որուն մէկ կողմը գրուած էր Մուպարաքի անունը, իսկ միւս կողմը՝ Պարաքի անունը, իսրայէլեան դրօշակին կողքին: Եգիպտոս պաշտօնապէս բողոք ներկայացուցած էր եւ քննադատած Արաֆաթը, որ կ'արտօնէ դպրոցականներու մասնակցութիւնը ցուցերուն:

Տեսակցութեան աւարտին, պաղեստինցի պաշտօնատարներ յայտնեցին, որ երկու ղեկավարները լուծած են տարակարծութիւնները վերստին բարեկարգելով կապերը: Եգիպտոսի պաշտօնատարներ սակայն մեկնաբանութիւն չկատարեցին:

ՌՈՒՍԻԱ եւ Եւրոպական Միութիւնը երկէ միացեալ յայտա-

հանգրուանին պատասխանատուութեան գիտակցութեան ոգին տիրապետէ եւ տիալովը վերակախ, որպէսզի կարելի ըլլայ վստահութիւնը վերահաստատել:

ՍՈՒՐԻԱ ԿԸ ԸՆՆԱԴԱՏԵ ՊԱՐԱՔԸ

Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէի քննադատեց Շարունի հետ կառավարական ընկերակցութիւն մը կազմելու Պարաքի ճիգերը, դիտել տալով, որ անոնց նպատակն է սպաննել խաղաղութեան գործընթացը:

Շարէի րասւ, որ Պարաք կ'ուղղուի դէպի ծայրայեղականութիւն: Ան աւելցուց, որ արդար եւ անբողջական խաղաղութեան մը բացակայութիւնը շրջանը պիտի չլրկէ կայունութեան եւ բարգաւաճումէ: Շարէի դիտել տուաւ նաեւ, որ Գահիրէի արաբական վեհաժողովը դուրը բաց պահեց խաղաղութեան դիմաց, մինչ Պարաք անմիջապէս առկախեց պաղեստինցիներուն հետ խաղաղութեան գործընթացը եւ ձեռնարկեց կապի միութեան կառավարութեան մը, որուն նպատակն է սպաննել խաղաղութեան գործընթացը:

Շարէի քննադատեց ՄԱԿի որոշումներուն

գործադրութեան ուղղեցին Իսրայէլի եւ պաղեստինցիներուն՝ անմիջապէս դարձեցնելու բախումները եւ բանակցութեան սեղան վերադառնալու:

Նախագահ Վլադիմիր Փութին եւ Ե. Միութեան ղեկավարները անհրաժեշտ կը նկատեն, որ ճակատագրական այս

(ՌՈՅԹԸՐԸ)

ՎԱՐՉԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

«Չուարթնոց» օդակայանին մէջ վարչապետ Երմոշին յայտնած է, որ Նոյեմբերի աւարտին Պիեյոնուսիոյ պաշտպանութեան նախարարը Հայաստան պիտի այցելէ: Ան րասւ, որ թէեւ իր երկօրեայ այցելութեան ընթացքին այդ մարտին մէջ գործակցութեան մասին քննարկումներ պիտի չըլլան, սակայն իրենք պատրաստ են սերտօրէն գործակցելու այդ ուղղութեամբ: «Այդ հարցը քննարկուած է վարչապետ Մարգարեանի Միւսք այցելութեան ընթացքին եւ հայկական կողմը կը քննարկէ ներկայացուած առաջարկները», րասւ ան:

Երմոշին նշեց, որ այցելութեան ընթացքին պիտի ստորագրուի Հայաստանի եւ Պիեյոնուսիոյ միջեւ բարեկամութեան եւ գործակցութեան պայմանագիրը, որպէսզի յառաջիկայ տարուան առաջին կիսուն Պիեյոնուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուբաշչէնքոյի Հայաստան այցելութեան ընթացքին վաւերացի երկու երկիրներու նախագահներու կողմէ:

Իր կարգին, վարչապետ Մարգարեան րասւ, որ երկու երկիրները կը գործակցին ԱՊՀ շրջագիծին մէջ եւ կարելոք կը նկատեն երկկողմանի յարաբերութիւնները, իսկ Երեւան Միւսքի հետ Ռուսիա - Պիեյոնուսիա միութեան մասին ընդհանրապէս բանակցութիւններ չի վարեր:

Վարչապետներ Մարգարեանի եւ Երմոշինի նախագահութեամբ եւ երկու երկիրներու կառավարական պատուիրակութիւններու մասնակցութեամբ երկէ գումարուեցաւ հայպիեյոնուսական միջկառավարական առեւտրատնտեսական յանձնախումբի նիստը, որ իր աշխատանքները պիտի շարունակէ այսօր:

(ԱՐՄԵՆՓՐԵՍ)

ARA TRAVEL IATA ԱՆՐԱՍ

ARMENIAN AIRLINES ՏՅԱԼՍ ԱԳԵՆՏ,

ՈՒՐԱՆՈՒԹԵԱՍԲ ԿԸ ՅԱՅՏԵ ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱՆՈՐԴՆԵՐՈՒՄ, ՈՐ Կ'ԱՊԱՇՏԵՐ

ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՎԱՆ - ՊԵՅՐՈՒԹ ԵՒ ԸԱԼԵՊ - ԵՐԵՎԱՆ - ԸԱԼԵՊ ARMENIAN AIRLINES ընկերութեան

ԱՐԱ ԹՐԱՎԸԼ, Պուրճ Համուտ, Նամակատան շէք, Հեռ. 266594 - 261296 : FAX: 261296

al-mashrek INSURANCE & REINSURANCE S.A.L.

Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.

(01)258228 - (01)268808 Fax: (01) 258223

365 ՕՐԵՐԸՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանան օրուան մը ճաշի ծախար՝ 300 ամեր. տոլարով: Տէր եւ տիկին Ռուբէն Պապիկեան եւ որդիք՝ ուխտի մը առիթով՝ 1 Նոյեմբեր:

STUDIO Lantern

• Կը ստանձնէ ուրախ առիթներու video

Գկարահանումներ Հեռ. 01-266866 Եւ 03-695399

ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

• Արաքս պողոտայի վրայ: 2 ննջասենեակ եւ հիւրարահ: Հեռ. 03-815043:

ՍՏԱՅԱՆՔ

• ԱՅ ԱՇԿԵՐՏԻՆ ԳԱՍՍՅՈՒՅԱԿԸ 1700ՄՄԵԱԿ Տպագրութիւն՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՇԵՍԵԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Սիրով կը հրապրենք Ձեզ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի աւանդութիւն դարձած գիրքերու տարեկան զեղչ - վաճառք ցուցահանդէսին, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 11 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը 6:00ին, «ԿԻԼԻԿԻԱ» բանգարանի սրահին մէջ: Մասնակցութեամբ՝ Համագային, Տճիկեան, Ծիրակ, Ոսկեդար, Պառնի, Սիփան, ԿիրակՍօրեայ, Զրիստոնեական եւ անհատական հրատարակչատուներու: Ցուցահանդէսը կը շարունակուի մինչեւ 19 Նոյեմբեր 2000:

ԱՐԱՔԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ԻՐԱՔԻ ՎՐԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԵՒ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՌՄՔԱԿՈԾՈՒՄԸ

Արաքական Լիկայի ընդհանուր քարտուղար Իսմայիլ Ապտեյ Մեկիտ երկուսու, որ Իրաքի դեմ ամերիկեան եւ բրիտանական օդանավային յարձակումները պէտք է դադարին:

Լիկային կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ ընդհանուր քարտուղարը կը դատապարտէ ամերիկեան եւ բրիտանական օդանավերուն կողմէ շարունակուող ուժեղացումը, որ անմէջ իրաքիներու կեանքը կը խլէ եւ ոչ փնտրուող կեդրոններ եւ գործարաններ կը քանդէ: Յայտարարութիւնը կ'աւելցնէր, որ Ապտեյ Մեկիտ կոչ ուղղած է Միացեալ Նահանգներուն եւ Բրիտանիոյ, որ վերջ տան Իրաքի դեմ յարձակումներուն եւ դիւանագիտական ճիգերու դիմէ՝ լուծելու համար հարցերը:

Իրաք երկու յայտարարած էր, որ Կիրակի օր երկու քաղաքայիններ սպաննուեցան եւ երրորդ մըն ալ վիրաւորուեցաւ հարաւային «արգիլեալ գօտի»ի մէջ, որ ուժեղացումի ենթարկուած էր արեւմտեան օդանավերուն կողմէ: Իրաք կ'ըսէ, որ «արգիլեալ գօտի»ներուն հաստատուէն ի վեր, 311 քաղաքայիններ սպաննուած են եւ 927 ուրիշներ վիրաւորուած:

Օոցի մէջ ամերիկեան եւ բրիտանական կեդրոնները մեկնաբանութիւն չկատարեցին Կիրակի օրուան ուժեղացումի լուրին մասին:

Միւս կողմէ, Իրաքի պէնթեոնը քննութեան ՄԱԿի յանձնարարութիւն՝ ԱՄՆՈՎԻՔԻ պատասխանատուն՝ Հանս Պլիքս երկու տեսակցութիւններ ունեցաւ պահիջնիցի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ:

ԱՄՆՈՎԻՔԻ հաստատուած է անցեալ Գեկտեմբերին, սակայն տակաւին գործի չէ ձեռնարկած, որովհետեւ Իրաք կը մերժէ գործակցիլ ՄԱԿի քննիչներուն հետ եւ կը մերժէ անոնց վերադարձը:

Պահիջնի յրատու գործակալութիւնը հաղորդեց, որ արտաքին գործոց նախարար շէյխ Մոհամէտ պըն Մուպարաք Խալիֆա ԱՄՆՈՎԻՔԻ գործունէութիւնը քննարկած է Պլիքսի հետ: Պլիքս մաղթած է, որ Պահիջնի շարունակէ գործակցութիւնը ԱՄՆՈՎԻՔԻ հետ:

ԻՐԱՆ

ՆՈՐ ՕՐԻՆԱԳԻԾ ՄԸ ԿԸ ՄՇԱԿՈՒԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Թեշվար, 30 (ՌՈՅԹԸՐԸ) — Իրանցի Երեսփոխաններ կը պատրաստեն օրինագիծ մը, որ իրաւունք պիտի տայ ամերիկեան «Նարթիկլուսթեան» զոհերուն եւ անոնց ընտանիքներուն հատուցման դատեր հետազոտելու իրանեան ատենաներու մէջ: Տարբերակ «Լիւթեխապ» օրաթերթը երկու շաբթի:

Իրանցի Երեսփոխանները կը հակադարձեն ամերիկեան կառավարութեան կողմէ վերջերս տրուած համաձայնութեան, որ միլիոնաւոր տղայրի հատուցման իրաւունք կու տայ Լիւթեխանի մէջ տարիներով պատանդ մնացած ամերիկացիներու, որոնք առեւանդուած էին Իրանի հովանաւորութիւնը վայելող շարժումներու կողմէ:

«Լիւթեխապ» կ'աւելցնէր, որ առաջարկուած օրինագիծին հիման վրայ, 1953էն ի վեր ամերիկեան քաղաքականութեան պատճառով վնասներ կրած իրանցիներ իրանեան ատենաներու մէջ իրաւունք պիտի ունենան դատ բանալու Ուաշինգթոնի դէմ: 1953ին, Իրանի ժողովրդային վարչապետ Մոհամէտ Մոսատէջի ազգայնական կառավարութիւնը տապալած էր, Միացեալ Նահանգներու զօրակցութիւնը վայելող վիճակուած պետական հարուածի մը կողմէ:

ԹԻՐԱՆՑԻ պաշտօնատարները յայտնեցին, որ Իրանի բանտերը վերածուած են թմրեւոյցիչի գործածութեան ինտելուստի կեդրոններու, որ վարակիչ հիւանդութիւնները արագ օրէն կը տարածուին: Պաշտօնատար մը աւելցուց, որ Թեշվարի նահանգային բանտերը կարելիութիւնը ունին տարւոյ հազար բանտարկեալ ընդունելու: Ներկայիս, այդ բանտերուն բանտարկեալներուն թիւը հասած է 34 հազարի:

ԹՐՔԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՌԻՃԵՐՈՒ ԵՒ ՔԻՒՐՏԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԲԱՆՈՒՄՆԵՐ

Թրքական ապահովական աղբիւրներ երկու յայտնած են, թէ ապահովութեան ուժերը երկրին հարաւարեւելեան գօտիին մէջ թիրու 12 անվտանգական գիտնական սպաննած են Կիրակի օրէն:

Տիրապետելի մէջ պաշտօնատարները ըսած են, թէ Շըրնաք նահանգի Պեյթուսեպպի շրջանին մէջ ըմբոստ բիւրտերու դէմ շարունակուող գործողութեան մը ընթացքին ապահովութեան ուժերու 3 անդամներ վիրաւորուած են:

ԱՏԱՆԱՅԻ ՄԵՋ ԲՐՏԱԿԱՆ ԸՄՐՈՍՏՈՒԹԻՒՆ

Միւս կողմէ, թրքական թերթերը հայտարարած են, թէ անցեալ շաբթի շարաւային Ատանա քաղաքին մէջ թիրու շուրջ 1500 կրեաններ պատնէշներ զետեղած են եւ քարեր արձակած ոստիկաններու վրայ, թիրու զեկավար Ապտիլլա Օճալանի ի նպաստ նշանախօսքեր լրացած չեն:

Երեսփոխանը իրենց արարելով բռնարարած են երկրի տարածքին կրակամարը, որ հաստատուած էր անցեալ շաբթուան մարտահամարին առիթով:

Անոնց լրորութք կը թուէր ներշնչուած ըլլալ Այսրայրի անանի վերջին դէպքերէն, յայտնած են թերթերը: Ոստիկանութիւնը քանի մը ցուցարարներ ձերբակա-

ՓՈՒԹԻՆ ՓԱՐԻՉԻ ՄԷՋ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄՆ Է, ՈՐ ՌՈՒՄԻԱ ԵՒ Ե. ՄԻՈՒԹԻՆ ԿԸ ԸԱՍԱՁԱՅՆԻՆ ՉԵՉԵՆԻՈՅ ՄԵՋ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ՄԸ ԳՏՆԵԼՈՒ ԸՆՏՐԱՆՔԻՆ ՇՈՒՐՁ

Կ ԸՄԵ ՇԻՐԱՔ

ՓԱՐԻՉ, 30 (ՌՈՅԹԸՐԸ) — Ռուսիա եւ Եւրոպական Միութիւն Երկուշաբթի օր Փարիզի մէջ կայացած վեհաժողովի մը ընթացքին համաձայն գտնուած են Չեչենիոյ շրջանին մէջ քաղաքական լուծումի մը անհրաժեշտութեան մասին:

Վեհաժողովը, զոր կը հիւրընկալէր Եւրոպական Միութեան ներկայ նախագահը՝ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք կը յաջորդէր Մոսկուայի եւ Փարիզի միջեւ մէկ տարւան յարուած յարաբերութիւններու Չեչենիոյ մէջ Ռուսիոյ փնտրուող արշաւին դէմ ֆրանսական քննադատութիւններուն պատճառով:

Մամլոյ ստուիիսի մը ընթացքին Շիրաք յայտնեց, թէ առաջին անգամ ըլլալով էր, որ Ռուսիա եւ Ե. Միութիւն համաձայնած են, որ թէ ըմբոստ շրջանին համար քաղաքական լուծում մը պէտք է գտնուի:

Հաղորդագրութիւն մը յայտնեց, թէ նման լուծում մը պէտք է յարգէ Ռուսիոյ հողային ամբողջականութիւնը եւ դատապարտեց «սահաբեկչութիւնը» իր բոլոր տեսակներով:

Չեչենիոյ պատերազմին պատճառով հազարաւոր ռուս փնտրուողներ, ըմբոստ չեչեններ եւ քաղաքայիններ սպաննուած են:

Փութին յայտնեց, որ Ռուսիա պատրաստ է «Չեչենիոյ մէջ բոլոր ուժերուն հետ» քաղաքական տիւրիկի ձեռնարկելու, սակայն ան մերժեց հաղորդակցութեան մէջ մտնել «մինչեւ իրենց արմուկները արեւուն մէջ թաթախուած մարդոց հետ»:

Ռուսիա, որ Սեպտեմբեր 1999ին իր քաղաքներուն մէջ ռմբակահարումներ դիմագրւած էր, կ'ըսէ, որ իր արարքները կ'արդարացուին սահաբեկչութեան եւ բրտութեան չեչենական սպառնա-



Շիրաք կը ընդունի Փութինը

ԻՔՆԵՐՈՒՆ ԿԱՏԱՌՈՎ:

Ե. ՄԻՈՒԹԻՆ – ՌՈՒՄԻԱ ԱՒԵԼԻ ՍԵՐՏ ԿԱՊԵՐ

Երկուշաբթի օրուան վեհաժողովը, որ իր տեսակին մէջ ճիշդ էր, Փութինի առիթ մը տուած է իր հիւրընկալներուն Կեկուցեւոյ շուկայի արեւելու մով բարեկարգումները արագացնելու եւ օտար շահարկումներ ներգրաւելու իր կառավարութեան ճիգերուն մասին:

Վեհաժողովը կը թուի նաեւ փարսաւած ըլլալ Ռուսիայի մտահոգութիւնները ինչ կը վերաբերի Կեդրոնական եւ Արեւելեան Եւրոպայի նախկին համայնավար երկիրներէն նոր անդամներ ունենալու Ե. Միութեան ծրագիրներուն, ինչպէս նաեւ պլոքին պահովական եւ պաշտպանութեան միացեալ նոր ծրագիրին գծով:

Ե. Միութիւն – Ռուսիա անշատ յայտարարութիւն մը յայտնեց, թէ Միութիւնը պիտի ուսումնասիրէ, թէ Ռուսիա ինչպէս կրնայ մասնակից դառնալ Ե. Միութեան տագնապներու տնօրինումի գործողութիւններուն:

«Այս որոշումներուն գործնականի վերած-

ուիլը առաջնահերթութիւն պիտի ըլլայ այսօրուին մինչեւ յառաջիկայ վեհաժողով», ըսաւ յայտարարութիւնը. սակարկելով Ե. Միութեան նիսի Գեկտեմբերի վեհաժողովին:

Վեհաժողովին Շիրաքի կողքին ներկայ գտնուած են նաեւ Ե. Յաննանաժողովի նախագահ Ռոմանո Փրոսի եւ Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու Խալի Սոլանա:

ՌԻՏԱԿԻՐԱ ՌԱՅԱՎՈՐԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆ

Վեհաժողովին ետք Փրոսի ընթացքին յայտնեց, թէ ստեղծուած է աշխատանքային խմբակ մը, որ պիտի ուսումնասիրէ Ռուսիայի ուսումնական փոփոխութիւնները եւ ներդրումները կատարելով:

Ղեկավարները քննարկած են Փրոսիի մէկ նախաձեռնութիւնը՝ Ե. Միութեան կողմէ ռուսական վաճառանիթի եւ զիտաւորութեան իրաւունքները կապի ներառումներուն թափ տալու գծով, յառաջիկայ 20 տարիներուն, սակայն անոնք յստակ համաձայնութիւն մը չեն գոյացուցած ապագայ հայթայթումներու կամ ներդրումներու գծով:

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին յայտնեց, որ այսպէս կոչուած «ուսումնասիրութիւն» ընթացքին արժարժուած են կապի, քարիւղի եւ էլեկտրականութեան կապուած հարցեր: «Ռուսիա պատրաստ է իր մասնակցութիւնը բերելու երկար տեւողութեան վրայ Եւրոպայի ուսումնասիրութեան, ըսաւ ան:

Փութին աւելցուց, որ Ռուսիայի մարզին մէջ գործակցութիւնը կարեւոր է եւ Ռուսիոյ համար հետաքրքրական, որովհետեւ անիկա կ'ենթարի յաւելեալ ներդրումներու ներգրաւումը:

ԹՈՒՐԲ ՆԱԽԿԻՆ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՄԸ ԵՐԿՐԻՆ ՓՏԱԾՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԿԱՏԵ ՄԵԾ ՍՊԱՌՆԱԼԻՔ ՄԸ

ՊՈԼԻՍ, 30 (ՌՈՅԹԸՐԸ) — Թուրքիոյ ներքին գործոց նախարար Սաատեթթին Թանթան Երկուշաբթի օր յայտնած է, թէ փտածութիւնը վտանգ կը սպառնայ Թուրքիոյ տնտեսական եւ քաղաքական կայունութեան եւ իսլամական ու քրիստոնէական ըմբոստներու համար էլեւմտական կարեւոր աղբիւր մըն է:

Նախկին ոստիկանապետը ուղղակի ակնարկութիւն չըրաւ Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցելու փափաքին, սակայն մեկնաբաններ կ'ըսեն, թէ կաշառք տալու եւ սպիտակութիւն բանեցնելու արմատացած մշակոյթ մը կրնայ դէպի անդամակցութիւն յառաջդիմութիւնը դանդաղեցնել:

Ե. Միութիւնը յառաջիկայ շաբաթ պաշտօնապէս Անգարայի պիտի յայտնէ, թէ քաղաքական ինչ փոփոխութիւններ կ'ակնկալէ, որպէսզի կարենայ անդամակցութեան բանակցութիւններուն սկսիլ:

«Փտածութեան տնտեսութիւնը Թուրքիոյ դեմ թիւ մէկ սպառնալիքն է», ըսած է Թանթան սկադեականներու եւ թղթակիցներու, Պոլսոյ համալսարանին մէջ փտածութեան մասին խորհրդաժողովի մը ընթացքին:

«Անիկա մեր երկրին բազմաթիւ հարցերուն ծնունդ տուող տուեալն է եւ ապագայի սպառնալիք մը կը ներկայացնէ մեր ընկերութեան եւ սահմանադրական վարչակարգին», ըսած է ան: Թանթան նկատագրած է Թուրքիա մը, ուր «գողերը եւ չարաշահողները, որոնք պէտք է արգելափակուին, մեր մէջ իրեն յարգուած մարդիկ ապաստօքն շրջելու կարելիութիւն ունին եւ նոյնիսկ խոնարհութեան կ'արժանանան»:

Փտածութիւնը մեծ բեռ է տնտեսութեան եւ ընկերութիւններուն, մինչ Թուրքիա կը փորձէ Եւրոպական շուկաներուն մէջ հաստատուիլ, գինները եւ սղաճի համեմատութիւնները կրճատի՝ համաձայն Գրամական Միջազգային ֆոնտին պօրակցութիւնը վայելող հակասողած ծրագիրին: Կարգ մը մեկնաբաններ պայն կը նկատագրեն իրեն «չտեսնուող հարկ»:

Բարձր մակարդակներու վրայ փտածութիւնը 1996ին յայտնաբերուած էր, երբ ինքնաշարժ կրկան մը պետութեան եւ ծայրայեղ աջակողմեան կազմակերպուած ռմբակոծութեան միջեւ կապեր ի յայտ բերած էր:

Գալթիկոլութիւնը երկրի տարածքին դուր բացած էր բողոքներու եւ մաքրագործումի կոչերու, սակայն դատախապներ ոչինչ ըրած են: Թանթանի օրով, ներքին գործոց նախարար-

ութիւնը կարեւոր անձնատրութիւններու ձերբակալութիւններու ձեռնարկած է եւ քննութիւններ բացած՝ միջին դասակարգի պաշտօնատարներու եւ գործարարներու մօտ կաշառակերութեան եւ անպարկեշտութեան հարցերով:

Նախարարը շեշտը դնելով փտածութեան պարտադրած տնտեսական գինին վրայ, պաշտօնացուցած է, որ անիկա նաեւ կը ֆինանսատրէ արմատական իսլամութիւնը եւ քրտական բիրտ ազգայնականութիւնը, զորս բանակը կը նկատէ երկրին սպառնացող գլխաւոր վտանգները:

ԹՈՒՐԻՒՆ

ՀՈԼԱՆՏԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՔՈՔ ԵՃԵԻՏԻ ՅԵՏ ԿԸ ՔՆՆԱՐԿԵ ՍԱՐԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՆՑ ՀԱՐՑԵՐ

ԱՆԳԱՐԱ, 30 (ՌՈՅԹԸՐԸ) — Հոլանտայի վարչապետ Վիմ Բոք Երկուշաբթի օր կոչ ուղղեց Թուրքիոյ, որ թափ տայ քաղաքական եւ տնտեսական բարեկարգումներուն, մինչ Եւրոպական Միութիւնը կը պատրաստուի Թուրքիոյ ներկայացնելու այն քայլերը, որոնց պէտք է դիմէ անդամակցութեան բանակցութիւններուն սկսելու համար:

Բոք թղթակցեցնելու յայտնեց, որ ինք եւ Թուրքիոյ վարչապետ Պիլէլինթ ճեւեիտ քննարկած են մարդկային իրաւանց վերաբերեալ հարցեր, որոնց կարգին՝ քրտական լեզուին դէմ դրուած սահմանափակումները եւ մահապատիժի հարցը, որ կը շարունակէ թրքական օրէնքին մաս կազմել:

Ե. Միութիւնը կը պահանջէ, որ Թուրքիա մահապատիժը շնչէ, ինչպէս նաեւ՝ քրտերուն լեզուական եւ մշակութային աւելի լայնածիր իրաւունքներ տայ՝ սփոռումներու եւ կրթութեան մարգերուն մէջ:

Թրքական իշխանութիւնները կը զգուշանան ասկէ, այն պատճառաւորանութեամբ, որ նման քայլ մը կրնայ երկրին քաջաշուք պատճառել:

«Կը յուսանք, որ Թուրքիա պիտի կարենայ կարելի եղածին չափ շուտ լրացնել պայմանները եւ հասնիլ չափանիշներուն՝ ո՛չ միայն իր առաջադրութիւններով, այլ լեւ զանոնք օրէնքի վերածելով եւ գործադրելով առօրեայ կեանքին մէջ», ըսաւ Բոք:

Միւս կողմէ, ան շեշտեց, որ Կիրայոսի կացութիւնը եւ Եգէական ծովուն մէջ Ցունաստանի հետ հողային վեճերը նկատի պիտի առնուին՝ անդամակցութեան բանակցութիւններուն սկսելէ առաջ:

Թրքական աղբիւրներ կ'անկալեն, որ փաստաթուղթը իր ընդհանուր ծիրին մէջ ընդունելի պիտի ըլլայ Թուրքիոյ համար, սակայն հաւանական կը նկատուի, որ Անգարա զգոհ պիտի ըլլայ եթէ անիկա ընդգրկէ որեւէ լրացալստ ակնարկութիւն՝ Կիրայոսի հարցի լուծման, իրրեւ նախապայման բանակցութիւններուն:

լած է եւ քանի մը ժամուան ցոյցէ ետք երեսաները ցրուած է:

Շուրջ մէկ միլիոն բիրտեր ապաստանած են Թուրքիոյ չորրորդ մեծագոյն քաղաքը՝ Ատանա. իոյս տալով թիրտ ըմբոստներու եւ ապահովութեան ուժերու միջեւ բախումներէն:

(ՌՈՅԹԸՐԸ, ՊԼՈՒՄՊԸԸԿ)

ԻՐԱՔԵԱՆ ՕԳԱՆԱԻԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹՈՒՉՔԵՆԵՐԸ ՊԻՏԻ ՎԵՐՍԿՍԻՆ

Իրաքի փոխարարաւիշոցներու նախարար Ահմէտ Մուրթաա Խալիլ երկու յայտնեց, որ «Իրաք Երուէյլ» թերթներուն պիտի վերսկսի նոյնեքեր 5ին: Թուրքները պիտի ըլլան ներքին Պաղտատէն Պաքա եւ Մուսուլ: Խալիլ ըսաւ, որ Պաքայի եւ Մուսուլի օդակայաններուն մէջ վերաշինութեան աշխատանքները աւարտած են: Իրաքեան օրաթերթերը հաղորդած էին, որ օդանավերն ալ պատրաստ վիճակի մէջ են:

Շարք՝ էջ 10

ԿԵՆՍՈՒՆՈՐՏԱՅԻՆ

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԲԵՒՆՈՒ ՎԵՐԵՒ

ՕՉՈՆԻ ԾԱԿԸ՝ ՑԱՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ ԱՄԵՆԵՆ ԽՈՐՈՒՆԿԸ

Հարաւային բեւեռի վերեւ օգոնի ծակը 15 տարիէ ի վեր, երբ գիտնականներ սկսած են արձանագրութիւն պահել եղանակային այս երեւոյթին մասին, ամէնէն խորունկն է, կ'ըսէին ՄԱԿ-ի մասնագէտներ այս ամսուան սկիզբը:

Օդ երեւութարանական Համաշխարհային կազմակերպութիւնը կը յայտնէր, թէ սրբաբոսֆէրի (մթնոլորտային խաւերէն մէկը) կարգ մը ենթախաւերուն մէջ օգոնի «գրեթէ ամբողջական քանդուած» նրկատուած է Սեպտեմբերի կէսերէն ի վեր, ինչ որ շատ աւելի կանխահաս է, քան նախորդ տարիները:

Կազմակերպութեան ղլխաւոր գիտնականներէն տղթ՝ Մայքըլ Փրոֆիթ կ'ըսէ, թէ ամէնէն կարեւոր տուեալը օգոնի ծակին խորունկիւնն է եւ անիկա ցարդ արձանագրուած ամէնէն խորունկն է: Կայ լայնածիր գօտի մը, ուր մաշումը աւելի քան 50 առ հարիւր է, կը յայտնէ ան:

Սեպտեմբերին արդէն ՆԱՍԱ-ն կը գոտւաչափէր, թէ ցարդ արձանագրուած օգոնի ամէնէն մեծ ծակը Բայքալի մէջ է: Անթարքթիքի վերեւ, ցուցանիչով մը, թէ տարիներ առաջ արձակուած օգոնը մաշեցնող կազեր չ'իւծ է. որ իրենց ամէնէն մեծ ազդեցութիւնը կ'ունենան:

ՆԱՍԱ-յի Համաձայն, այս տարուան օգոնի ծակը կը տարածուի շուրջ 28,3 միլիոն քառակուսի քիլոմետրի վրայ, ինչ որ կը Համապատասխանէ Միացեալ Նահանգներու մակերեսին եռապատկեր տարածութեան: 1998ին օգոնի ծակը 27,2 միլիոն քառակուսի քիլոմետրի վրայ կը տարածուէր:

Աւելի քան տասնամեակէ մը ի վեր, երկրագունդին պաշտպանող խաւին մէջ տարեկան ծակը կը յայտնուի Օզոնատոսի վերջերուն կամ Սեպտեմբերի սկիզբը ու գազաթնակէտ կ'արձանագրէ Հոկտեմբերի առաջին մէկ կամ երկու շաբաթներուն:

Օզոնի ծակին մեծութիւնը եւ խորունկութիւնը տարուէ տարի կը փոխուին: Ներկայիս, կ'ըսեն մասնագէտներ, անոր մեծութիւնը անընդհանրապէս, սակայն խորունկութիւնը շատ մեծ է:

Անթարքթիքի վերեւ օգոնի ծակը, որ առաջին անգամ նկատուած է 1985ին, բացուած է մարդոց արտադրած քլորական կարգ մը նիւթերու պատճառով օգոնի մաշումին հետեւեալով:

Հակառակ անոր որ այս նիւթերը 1987էն ի վեր արգիլուած են, անոնք կը շարունակեն մթնոլորտին մէջ մնալ եւ պիտի շարունակեն մնալ տարիներ, կ'ըսեն ՆԱՍԱ-յի գիտնականները:

Օզոնի ծակին հսկայ հանգրուանին գազաթնակէտ արձանագրող տարիները պիտի շարունակուին մինչեւ շուրջ 2010 թուական, կը յայտնէ ՆԱՍԱ-յի գիտնականներէն Փոլ Նիումըն:

ՄԱԿ-ի եւ ՆԱՍԱ-յի մասնագէտներու տեղեկագիրները կը հրատարակուէին Լա Հէյի մէջ Նոյեմբերին կայանալիք խորհրդածուի ղլխի մը նախօրեակին՝ կլիմայական փոփոխութեան վերաբերող հարցերու քննարկումին համար:

Կառավարութիւններ ճրնչումի տակ են յարգելու համար 1997ին Քիոթոյի մէջ իրենց կատարած խոստումները, ինչ կը վերաբերի ջերմանոցի կազերու արտանետումներու կրճատումին: Անոնք կ'ամբաստանուին ընդհանրական ջերմացում եւ օդի ծայրայեղ երեւոյթներ պատճառելու յանցանքով:

Հոկտեմբերի սկիզբը օգոնի ծակը Արժանթինի Ուլուայա քաղաքին եւ Չիլիի Փուեմա Արինաս շրջանին վերեւ կը գտնուէր՝ բնակիչները անընդմեջ նշակողով:

Օրին իշխանութիւնները զգուշացուցած էին այդ բնակիչները, թէ օրուան ընթացքին արեւուն տակ պէտք չէ գտնուին:

ՇԻՄՍԻԱՅԻՆ ԲԵՒՆՈՒ ՕՉՈՆԸ 2020ԻՆ ԿՐԱՅ ՆՈՅՆՔԱՆ ՎՆԱՍՈՒՄԸ

Անթարքթիքի վերեւ օգոնի ծակը գտած ըրիտանոցի երեք գիտնականներէն մէկը՝ Ճոն Պրիմըն Շանթին, կը հարցազնայ, թէ մինչեւ 2020 նոյն վնասը կրնայ հասնիլ Հիւսիսային բեւեռին:

Ան անցեալ շաբաթ կը յայտնէր, թէ երկրագունդը շրջապատող օզոնի խաւը պայելու ընթացքի մէջ կը գտնուի, ինչ որ անոր կ'ընթակի Բարեկրթութեան ակադեմիայի կողմէն:

Շանթին կը բացատրէ, թէ այդ խաւը աւելի պաղ կը դառնայ ջերմանոցի կազերուն պատճառով, որոնք կ'արձակուին գետնի վրայ:

Ան կ'ըսէ, որ գիտնականներու կարծիքով, յա-

ռաջիկայ 20 տարիներուն հաւանական է, որ տեանուր օգոնի ծակ մը, որ կրնայ նոյնքան մեծ ըլլալ, որքան Անթարքթիքի վերեւ ներկայ ծակը, սակայն՝ Հիւսիսային բեւեռի վերեւ:

Հիւսիսային բեւեռի վերեւ օգոնի հաւանական ծակ մը այնքան կը մտահոգէ գիտնականները, որ անոնցմէ 500 հոգի ՆԱՍԱ-յի եւ Եւրոպական Միութեան հովանաւորութեամբ, անցեալ Նոյեմբերէն Մարտ, Հիւսիսային Շուէտի ամէնէն Հիւսիսային քաղաքներէն մէկուն՝ Քիլրունայի մէջ ուսումնասիրութիւններու ձեռնարկած է:

Մրցակիցի մասնակցող ՆԱՍԱ-յի գլխաւոր գիտնական տղթ՝ Մայքըլ Քուրիլը կ'ըսէ, թէ Մարտ 2000ին օգոնի կորուստի համեմատութիւնները օրական 2 առ հարիւրի մօտեցած են, ինչ որ կը համապատասխանէ Անթարքթիքի վերեւ արձանագրուած կորուստներուն: Մարտի ընթացքին օգոնի կորուստը 60էն 65 առ հարիւրի գազաթնակէտ մը արձանագրած է:

Բրիտանացի գիտնական տղթ՝ Նիլ Հէյնս կը նշէ, որ ամէն տարի Անթարքթիքի վերեւ օգոնը կը քանդուի երկրագունդէն շուրջ 15էն 20 քմ. բարձրութեան վրայ՝ 6էն 8 ամսուան ժամանակամիջոցի մը ընթացքին:

Ան կ'ըսէ, որ Հիւսիսային բեւեռի օգոնը այնքան ծանրորէն չի վնասուիր, սակայն բոլոր նշանները ցոյց կու տան, թէ հոն օգոնի խաւին մաշումը աւելի ծանրակշիւ կը դառնայ:

Անցեալ 10 ձմեռներէն վեցին ընթացքին Հիւսիսային բեւեռի օգոնը իր բնական համեմատութիւններուն կէսին չափ արձանագրուած է: Իսկ անցեալ տարուան Նոյեմբերին եւրոպական «ԻՐՍ-2» արբանեակին հաղորդած տեղեկութիւնները ցոյց տուած են, թէ Բրիտանիոյ, Պել՝ Տիքսի, Հոլանտայի եւ Շուէտի վերեւ օգոնի համեմատութիւնները բնականէն երկու երրորդին չափ են հագու, այսինքն գրեթէ նոյնքան ցած որքան Անթարքթիքի վերեւ օգոնը:

Հէրիս դիտել կու տայ, որ Հիւսիսային շրջանին մէջ աւելի խիտ բնակչութեամբ գօտիներ կան. հետեւաբար Հիւսիսային բեւեռի վերեւ մաշումը շատ աւելի վտանգաւոր կ'ընայ ըլլալ, քան Հարաւային բեւեռի վերեւ ծակը:

Եթէ գիտնականներ իսկապէս լաւ հասկնային օգոնը մաշեցնող գործընթացը, Հիւսիսային բեւեռի օգոնի կորուստը այնքան մեծ հետագօ-



Օ գ ո գ ը չափելու ՆԱՍԱ-յի նորագոյն արբանեակը՝ «Էս. Էյ.Տի.Ի. III», պիտի արձակուի Ղեկավարի Ղեկմանը: Անիկա հիւսիսային բեւեռի վերեւ սրբաբոսֆէրին է թրոփոսֆէրին մէջ (մակերեսէն 0.5 մ 10 քմ. բարձրութեան) տեղեկութիւններ պիտի քաղէ օզոնը, ջրաշոգիչը եւ այլ կազերու մասին:

ՆՈՒԱԶ ՕՉՈՆ, ՅԱՒԵԼԵԱԼ ՔԱՂՅԿԵՂ

Օզոնը կը Գերծծէ արեւուն աղոյսը անհրաժեշտ շակագոյն ՊԷ. Գառապայթեցրը, որոնք կրնան վնասել Ա.Տ.Է.Կ.Ի.Ն եւ բջիջներուն: Սթրոնտի վերից խաւին (սթրատոֆէր) մէջ, ուր օզոնի 90 առ հարիւր կը գտնուի, ցուց օզոն կը նշանակէ, թէ յաւելեալ աղոյսը անհրաժեշտագոյն ՊԷ. Գառապայթեցր կը հասնի Երկրագունդի մակերեսը՝ յաւելեալ քաղցկեղներ, քարայրք եւ մարմին քնական պաշտպանութեան տկարութիւն պատճառելով:

Շուէտի մէջ մորթի մեղանոց քաղցկեղի պարագայները արդէն այսօր չորս անգամով աւելի են. քան 1960ական թուականներուն:

Օզոնը թէ կը ստեղծուի, թէ կը քանդուի սթրատոֆէրին մէջ (ծովէն 10 քիլոմետրէն 50 քիլոմետր բարձրութեան): Բանայի երկու տուեալներ աճողութեամբ են օզոնի քանակը համար. քլոր կամ պրոմէ շինուած ցիւթերու ցերեպայթիւնը (օրինակ՝ քլորոֆլիւորոքարպոնները Ա.Է.Ֆ.Ս.Է.) եւ չափազանց պաղը. որ առիթ կու տայ բեւեռային սթրատոֆէրային ամպերու (Փ.Է.Ս.Ս.Է.) կազմութեան:

Այդ ամպերը կը հայթայթեն մակերեսը, ուր քիմիական ցիւթեր կրնան վերածուիլ մոնոքլորոտ սոք քլորի, որ օզոնը կը քանդէ:

Օզոնի խաւը պահպանելու ճիգով մը, կատարուելիքները 1996ին համապայման են Ս.Է.Ֆ.Ս.Է. եւ օզոնը քանդող քիմիական այլ ցիւթերու գործածութիւնը արգիլել:

տուեթեանց ճիգերու կարիքը պիտի չունենար: Սակայն անոնք լաւ չեն հասկնար: Հէրիս կը յայտնէ, որ անցնող 5էն 6 տարիներուն գիտնականներ գտած են, թէ համակարգային մոտիւններ օզոնի մաշումը ճշգրտորէն չեն «արտագրեր»: Ի յայտ եկած է, թէ մոտիւններ օզոնի նուազ կորուստ գտած են, քան ինչ որ պատահած է իրականութեան մէջ:

ԲԵՒՆՈՒՅԻՆ ԲԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ ՏԻՌՔՍԻՆԸ ՀԱՐԱԻՆ ԿԱՊՈՒՄԸ Է

ԿԸՍԵ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՍԸ

ՍՆԵՂԱԿԱՆՈՒ ՓՈՓՈՒՄՈՒԹԻՒՆԸ ԸՆՏՐԱՆԸ ՉԷ

Քանադայի ինտելի իմբակի մը նախագահը՝ Շիլա Ուաթ - Քլուիթի, կ'ըսէ, թէ ընդունելի է կարգ մը արձեւեռն այն առաջարկը, թէ ինտելիթները պէտք է իրենց սննդականները փոխեն, որպէսզի խուսափեն տխրութիւն:

Ան դիտել կու տայ, որ ինտելիթներուն համար սննդականները փոփոխութիւնը ընտրանք մը է ու կարելի է անհնարապէս ուսուցիչը փոխել: «Կենսոլորտը մեր հանրաքանութիւն է, եւ մենք հողը պիտի չընենք», կը շեշտէ ան:

Հետազոտողները բեւեռային Քանադայի հեռուէր Նունաւութ շրջանը օգտագործած են ցոյց տալու համար, թէ ապականոց նիւթեր ինչպէս կը ճարտարապետ կազերու արտանետումներու աղբիւրէն շատ աւելի հեռու վայրեր:

Արեւելեան Հիւսիսային բեւեռի այդ շրջանին մէջ գտնուած են 8 վայրեր, ուր տխրութիւնը կը հասնի:

Ուսումնասիրութիւնը գլխաւորած Պէրի Քոմբըրը կ'ըսէ, թէ մարդիկ հակուած ունին մոռնալու, թէ հարաւէն դէպի Նունաւութ ուղղուող տխրութիւնը ճարտարապետի արտանետումներէն, եւ նկատելի ունենալով մթնոլորտային շարժումները՝ տխրութիւնը եւ ապականոց այլ նիւթեր մարդը Հիւսիսային կիսագունդին մէջ կը տարածուին Մեքսիքայէն Հիւսիսային բեւեռ:

Տեղեկագիրը կը յայտնէ, որ ուսումնասիրութեան ճարտար ճշգրտած տխրութիւնի աղբիւրներու 23 տեսակներուն 6ը Հիւսիսային Ամերիկայի մէջ տխրութիւնը բոլոր արտանետումներուն 90 առ հարիւրին պատասխանատու է:

Անիկա կ'ըսէ նաեւ, որ Հիւսիսային Ամերիկայի մէջ ճշգրտած արտանետումներու 44 հազար աղբիւրներուն, որոնք Նունաւութի մէջ ապականոց կը պատճառեն, 62 առ հարիւրը Մեքսիքայէն են, 30 առ հարիւրը Մեքսիքայի եւ 8 առ հարիւրը Քանադայի մէջ կը գտնուին: Իսկ Նունաւութի մէջ տխրութիւնի աղբիւրներ ընդհանրապէս չեն, ինչպէս նաեւ վերջերս՝ ինտելիթ մայրերու կաթին մէջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԸ ԿԸ ՊԱԿՄԻ ԿԵՆՍՈՒՆՈՐՏԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բնական հարստութիւններու պահպանումի մասնագէտներու համաձայն, քաղաքական յանձնարարութեան պակասը կը խոչընդոտէ կենսոլորտը պաշտպանելու եւ աշխարհի վտանգը լաւ էակները պահպանելու ճիգերը:

Պահպանումի Համաշխարհային Միութիւնը, որուն մաս կը կազմեն կառավարական գործակալութիւններ, ոչ կառավարական կազմակերպութիւններ եւ աշխարհի տարածքին շուրջ 10 հազար գիտնականներ, Հոկտեմբերի սկիզբը Ամմանի մէջ կայացուցած էր ութօրեայ համագումար մը:

Անոր աւարտին յամար կը յայտարարէր, թէ գիտական, արհեստագիտական եւ մարդկային միջոցները գոյութիւն ունին ապրող էակներու տեսակներու բնաջնջումը կանխարգիլելու համար, սակայն կը պակսի գանձը գործածելու քաղաքական յանձնարարութիւնը:

140 երկիրներէ մասնակցած շուրջ 2500 պատուիրակներու կողմէ քննարկուած գլխաւոր ճիւղերը եղած են շուրջ եւ հողը: Համագումարը Միջին Արեւելքի մէջ կը տեսակին մէջ կայացած մեծագոյնը եղած է:

Պահպանումի Համաշխարհային Միութիւնը համագումարի աւարտին յայտարարած էր, թէ 30 միլիոն տղար անապատներու մը գործադրութեան պիտի դրուին 24 ծրագիրներ՝ աշխարհի աղքատ համայնքներուն ջրի հայթայթելու համար:

Միութիւնը որդեգրած էր նաեւ չորս տարուան ծրագիր մը, որ շուրջ 200 երկիրներու վրայ ազդեցութիւն պիտի ունենայ:

Անոր մաս կը կազմեն ծրագիրներ՝ կլիմայական փոփոխութիւնը ապրող էակներու այլազանութեան կապով. նոր մօտեցումներ՝ պահպանելու համար էքոլոգիաները:

ՎՈՒՐ ՊՍՏՊԱՍՈՒԹԻՒՆ ՀՈՒՄԱՆՅԵՅԻ ԺՈՂՈՒՄԸ

Մինչ այդ կառավարութիւնները ճշգրտմի տակ են Նոյեմբերին կլիմայական փոփոխութեան կարեւոր համագումարի մը բնթացքին համաձայնութիւն գոյացնելու՝ ջերմանոցի կազերու նուազեցում գծով:

Ամմանի համագումարին մասնակցած մասնագէտներ գոյացուցած են, որ եթէ երկիրներու միջեւ տարակարծութիւններ չլուծուին ու համաձայնութիւն չգոյանայ, հետեւանքները աղէտալի պիտի ըլլան:

Առանց կառավարական հաստատ յանձնարարութիւններու բնապահպան կազի եւ ջերմանոցի այլ կազերու արտանետումները կրճատելու գծով, բեւեռային ստոյգներու հալքի, ջերմաստիճաններու բարձրացում եւ ծովու մակարդակի բարձրացում անխտեստութիւնները իրականութիւն պիտի դառնան. կ'ըսեն մասնագէտներ:

Քիտոյի միջազգային փորձագոյրը, որ 1997ին կ'ընտրուէր, արեւմտեան երկիրները պարտադրաբար տակ կը դնէ բնապահպան կազի արտանետումները 2008էն 2012 կրճատելու հասցնելով 5.2 առ հարիւրի:

Իսկայն համաձայնագիրին բազմաթիւ մանրամասնութիւններ տակային բանակցութեանց արտակալ պէտք է դառնան. եւ ստիկատեղի պիտի ունենայ Նոյեմբեր 13էն 25ի ժողովին:

Պատրաստեց Ս. Ա. ՊՈՅԱՃԵԱՆ

Օգտագործուած աղբիւրներ՝ «ՈՅՅԸՐԸ» եւ «ՖՈՒՐՍ»

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Բ Ն



ՄՐՅՈՒՄ «ԾԱԽԵԼՈՒ»

ԳԱՅՈՒԿՆԵՐԻ ԻՏԱԼԻՆՆԵՐ

ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԻՏԱԼԻՆՆԵՐ ՄԵՋ

Իտալիոյ ֆուտբոլի ֆետերասիոնը երէկ յայտնեց, թէ յաջողած է «գտնել» ութը ֆուտբոլիստներ (Ա. Ե. Բ. դասակարգին մաս կազմող), որոնք ամբաստանուած են մրցումներ «ծախելու» յանցանքով:

Անոնցմէ երեքը մաս կը կազմեն Աթալանթայի (Ա. դասակարգ), իսկ մնացեալ հինգը՝ Փլոթինիէզէի (Բ. դասակարգ): Այլ ութը մարզիկներն են. ճիւղում Պանչինի, Քրիսթիանո Տոնի, Սեպատիանո Սիլվիո (Աթալանթա), Ալֆրետո Ալլիբի, Մասիմիլիանո Ալեկի, Տանիէլէ Ամբրոսի, Ճիանլուքա Լիլո եւ Ժիրոլամո Պիցարի (Փլոթինիէզէ):

Մրցում «ծախելու» այս գաղթականները, վերջին տարիներուն Իտալիոյ ֆուտբոլի պատմութեան մէջ կը նկատուի մեծագոյնը, նկատի ունենալով, որ թիւով այսքան շատ մարզիկներ մասնակից կ'ըլլան նմանօրինակ ամօթալի երեւոյթի մը:

Իտալիոյ ֆուտբոլի ֆետերասիոնը կը յայտնէ, թէ այն կարծիքը ունի, որ այլ անձեր այլ (շատ հաւանաբար պատասխանատուներ) մեղսակից են անոնց, ինչ որ շուտով երեւան պիտի գայ:

Այլ մարզիկները մրցումը «ծախած» ըլլալու յանցանքով ամբաստանուած են, երբ երկու խումբերը իրարու դէմ յանդիման եկած էին անցեալ Օգոստոս 20ին (Իտալիոյ բաժակ):

«ԱՄԻՍ - 2000»

ԹՐՈՒՄԻԷ ԳՈՐ՝ ԵԱՓՈՆԻ ԱՐԶԱՆԱԳՐԱԾ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԵՆ

Ճափոնի ֆուտբոլի ասոցիացիոն խումբին մարզիչը՝ ֆրանսացի Յիլիփ Թրուսիէ երէկ ֆրանսական «Լէքիֆ» օլաքթիքին հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին ըստ. թէ Մէտաական Արարիոյ դէմ իր կազմին արձանագրած յաղթանակը յաւելեալ պատճառ մը պիտի դառնայ. որ Ճափոն աւելի բարձր կորովով հիւրընկալէ 2002ի Մոնտիալը. Հարաւային Քորէայի հետ:

«Ճափոնի համար «Ասիա - 2000»ի բաժակը շահիլը շատ կարեւոր էր մանաւանդ. որ անկիս իր պատմութեան մէջ երկրորդ անգամ ըլլալով տիրացաւ տիտղոսին: Այդ յաղթանակը ինձմէ աւելի նշանակալի կարելոք եղաւ մարզիկներուն համար. որոնք միջազգային փորձառութիւն ձգեցին, ըստ Թրուսիէ, անգամ մը եւս հաստատելով. որ պիտի շարունակէ մնալ իր պաշտօնին վրայ:

Թրուսիէ ըստ. որ նախքան այս տարուան աւարտը մտադրած է ֆուտբոլի կարգ մը բարեկամական մրցումներ կատարել. որպէսզի խումբին երիտասարդ մարզիկները առիթ ունենան իրենցմէ շատ աւելի պօրտըր նկատող կազմերու դէմ ձակաւորուի: Ճափոնի արցակիցները պիտի ըլլան Ֆրանսա, Սպանիա եւ շատ հաւանաբար Իտալիա:

Ելրափակելով, ան ըստ. թէ մինչեւ 2002ի Մոնտիալի ապահաշարը. եթէ իր մարզիկներէն շատեր մաս կազմեն եւրոպական ակումբներու, իր կազմը աւելիով պօրացած պիտի ըլլայ:

ԹԵՆԻՍ

ՇԹՈՒԹԿԱՐԹԻ «ՄԱՍԹԸՐԶ» ՄՐՅԱՇԱՐՔ

Շթուբկարթի մէջ տեղի ունեցող «Մասթըրզ»ի թենիսի տղոց մրցաշարքի Ա. հանգրուանի մրցումներուն, իւրուք Կորան Իվանիւտիչը դուրս մնաց, երբ 6-3 եւ 7-6 արդիւնքով պարտուեցաւ Ֆապրիս Սանթրոյի (Ֆրանսա): Գուրս մնացողներուն շարքին էր նաեւ Հիշամ Արապի (Մարոք), որ պարտուեցաւ Ժիլիէն Պուլթիէն (Ֆրանսա)՝ 6-4, 3-6 եւ 6-1 արդիւնքով:

Ռիչըրտ Քրայչէք (Հոլանտա) հանգիստ յաղթանակ մը արձանագրեց 6-2 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնելով Ալպերթո Մարթինը (Սպանիա):

Յաղթանակներ արձանագրեցին նաեւ Մայքըլ Չանկ, Նիքոլա Էսքիտ, Կրէկ Ռուտեպի, Արնոտ Բլեմէնթ եւ ուրիշներ:

Ստորեւ Ա. հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Մայքըլ Չանկ (Մ. Ն.) - Ենս Քնիփսիլտ (Գերմանիա) 6-3, 6-7 եւ 7-6

Թոմաս Ենհանարն (Շուէտ) - Ֆրանչիսքո Բլաւէթ (Սպանիա) 7-6, 6-7 եւ 6-4

Ժիլիէն Պուլթիէն (Ֆրանսա) - Հիշամ Արապի (Մարոք) 6-4, 3-6 եւ 6-1

Ռիչըրտ Քրայչէք (Հոլանտա) - Ալպերթո Մարթին (Սպանիա) 6-2 եւ 6-4

Ենս Այնուի (Մարոք) - Քարիմ Ալամի (Մարոք) 7-6, 3-6 եւ 6-3

Ֆապրիս Սանթրո (Ֆրանսա) - Կորան Իվանիւտիչ (Սլովակիա) 6-3 եւ 7-6

Կրէկ Ռուտեպի (Բրիտանիա) - Ժրոմ Կոլմար (Ֆրանսա) 6-1 եւ 6-2

Արնոտ Բլեմէնթ (Ֆրանսա) - Անտրէաս Վինսիկուրա (Շուէտ) 6-2, 1-6 եւ 6-4

Հ. Մ. Ը. Մ. ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ PING PONGԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

●Մունչօղլեան Բաֆֆի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ

Աճմէան Ալեքս
Շեմմէան Բազմիկ
Թօփուլեան Սօսի

ՄՊԱՆԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԵԼՈՆԱ ՆԱՀԱՆՋԵՑ 7ՐԴ ԴԻՐՔ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 7րդ հանգրուանի մրցումներուն, Պարսելոնա 2-0 արդիւնքով պարտուած իտալեակէն Ետք Մայրոքայի դաշտէն (Երրորդը՝ այս եղանակին) նահանջեց 7րդ դիրք: Մայրոքա. որ կ'արձանագրէր եղանակի իր երկրորդ յաղթանակը. իր կողերը նշանակեց 12րդ եւ 52րդ վայրկեաններուն:

Պարսելոնի դիրքը գրաւող վալենսիա 2-1 արդիւնքով յաղթանակ վերադարձաւ Օսասունայի դաշտէն եւ այժմ ունեցաւ 16 կէտ: Անիկա այժմ երկու կէտով կը գերազանցէ Ռեալ Մատրիտը (2րդ), Ալաւէսը (3րդ) եւ Տեփորթիս Քորուան (4րդ). որոնք բոլորն ալ ունին 14ական կէտ: Անոնք բոլորն ալ յաղթանակներ արձանագրեցին յաջորդաբար պարտութեան մատնելէ ետք Ռեալ Մոսիետաը (4-1), Ռայօ վալեթանուն (1-0) եւ Նուանսիան (2-1):

Ռեալ Մարսիլոս տակաւին կը մնայ միակ կազմը. որ չէ կրցած արձանագրել եղանակի իր առաջին յաղթանակը: Անիկ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Մալալայի հետ:

Ստորեւ՝ 7րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Սեյլա Վիկո - Ռեալ Վալառոլիտ 2-1

Եսփանիոլ - Ռեալ Օվիեո 2-0

Օսասունա - Վալենսիա 1-2

Ռայօ վալեթանուն - Ալաւէս 0-1

Ռեալ Մոսիետա - Ռեալ Մատրիտ 1-4

Լաս Փալմաս - Ռասիլ Սարսանտեր 2-1

Նուանսիա - Տեփորթիս Քորուան 1-2

Մայրոքա - Պարսելոնա 2-0

Ռեալ Մարսիլոս - Մալալա 1-1

Վիարեալ - Աթլետիքո Պիլաօ	0-0
ԳԱՍԱՌՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Վալենսիա	16
2.- Ռեալ Մատրիտ	14
3.- Ալաւէս	14
4.- Տեփորթիս Քորուան	14
5.- Սեյլա Վիկո	13
7.- Պարսելոնա	12
19.- Ռեալ Մոսիետա	5
20.- Ռեալ Մարսիլոս	4

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻՑՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ

Տեփորթիս Քորուան - Լաս Փալմաս մրցումով այսօր կը սկսի Տրոյ հանգրուանը. մինչ մնացեալ ինը մրցումները տեղի կ'ունենան վաղը:

Անցեալ եղանակի ախոյեան Տեփորթիս Քորուան, որ այժմ կը գրաւէ 4րդ դիրքը, յաղթանակի մը պարագային առժամաբար պիտի գրաւէ պարագլուխի դիրքը:

Յաջորդական երեք յաղթանակ արձանագրելէ ետք, Լաս Փալմաս կը գրաւէ Տրոյ դիրքը, ինչպէս կէտով եւս մնալով պարագլուխի դիրքը գրաւող վալենսիայէն:

Տեփորթիս դաշտ պիտի ներկայանայ առանց յետապահ Տոնտրոյի (Վիրանոր) եւ միջնապահ Ֆերնանտոյի (Կալսիկալունո):

Անցեալ եղանակին փոխախոյեան հանդիսացած վալենսիա, որ շարքաւ վերջին եօթ տարուան մէջ առաջին անգամ ըլլալով գրաւեց պարագլուխի դիրքը. վաղը դժուար մրցում մը ունի կատարելիք. երբ իհարար կ'ընդունէ Սեյլա Վիկոն (Տրոյ): Գժուար այն իմաստով, որ մարզիչ Հեքթոր Քուիլթի կազմէն պիտի բացակայի երեք հիմնական մարզիկներ. որոնք բոլորն ալ վիրատու են: Առաջին բացական պիտի ըլլայ

Ժուլյէն Անկոմա, երկրորդը՝ Մարիցիո Փելեքիսո. իսկ երրորդը՝ Տաիտո Ալպիտա:

Պարսելոնա, որ պիտի հիւրընկալէ Նուանսիան (16րդ), դաշտ պիտի ներկայանայ առանց բերդապահ Ռիշար Տիլլիլիէի. որ ըստ մարզիչ Սերա Ֆերէրի. Շաբաթ օր եղած էր գլխաւոր պատասխանատուն իր ստացած երկու կոլերուն:

Պարսելոնա այժմ կը գրաւէ 7րդ դիրքը:

2րդ դիրքը գրաւող Ռեալ Մատրիտ պիտի հիւրընկալէ Մայրոքան (13րդ). իսկ 3րդ դիրքը գրաւող Ալաւէս նախապէրջին դիրքը «գրաւող» Ռեալ Մոսիետաուր:

Տրոյ հանգրուանի մրցումներուն նախօրեակին, ցարդ մէկական պարտութիւն կրած են Վալենսիա, Ռեալ Մատրիտ, Ալաւէս. Ռայօ վալեթանուն եւ Ռեալ Վալառոլիտ. իսկ մէկական յաղթանակ արձանագրած են Ռեալ Վալառոլիտ, Օսասունա, Ռասիլ Սարսանտեր եւ Ռեալ Մոսիետա:

Վերջին դիրքը գրաւող Ռեալ Մարսիլոս ցարդ կը մնայ միակ կազմը. որ յաղթանակ չէ կրցած արձանագրել:

Ստորեւ՝ Տրոյ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ԱՅՍՕՐ	Տեփորթիս Քորուան - Լաս Փալմաս
ՎԱՂԸ	Ալաւէս - Ռեալ Մոսիետա
	Աթլետիքո Պիլաօ - Ռեալ Մարսիլոս
	Պարսելոնա - Նուանսիա
	Մալալա - Օսասունա
	Ռասիլ Սարսանտեր - Վիարեալ
	Ռեալ Մատրիտ - Մայրոքա
	Ռեալ Օվիեո - Ռայօ վալեթանուն
	Ռեալ Վալառոլիտ - Էսփանիոլ
	Վալենսիա - Սեյլա Վիկո

ՃԱՏՐԱԿ

ՔՐԱՄՆԻՔ - ԳԱՍՊԱՐՈՎ՝ 7,5 - 5,5

Լոնտոնի մէջ շարունակուող ճատրակի երկու հսկաներուն՝ Կէրի Գասպարովի եւ Վլադիմիր Բրամնիքի միջեւ «Մրցաշարքը» այնպէս կը թուի, որ գրեթէ հասած է աւարտին, որովհետեւ 13րդ հանդիպումէն ետք, Բրամնիք ձեռք ձգած է երկու կէտի առաւելութիւն:

13րդ հանդիպումին, հակառակ անոր, որ Գասպարով կը խաղար ճերմակ քարերով, սակայն ան 14րդ շարժումին «բաւարարուեցաւ» հաւասարութեամբ:

Այս հաւասարութիւնը պատճառ դարձաւ, որ արդիւնքը ընթանայ ի նպաստ Բրամնիքի՝ 7,5 - 5,5 արդիւնքով:

«Մրցաշարքին» աւարտին մնացած է երեք հանդիպում միայն եւ Բրամնիք պէտք ունի միայն մէկ կէտի. տանելու համար վերջնական յաղթանակը:

Այսօր տեղի կ'ունենայ 14րդ հանդիպումը, որուն ընթացքին Բրամնիք կը մրցի ճերմակ քարերով:

ՊԱՍԵՆԹՊՈՆ

ԱՅՍՕՐ՝ Հ. Մ. Ը. Մ. - ՄԻԶԻԱՐԱ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Պասքեթբոլի բարեկամական մրցումի մը ընթացքին, այսօր ժամը 6:30ին Հ. Մ. Ը. Մ.ի տղոց կայմը (Ատոմ եւ Սելլա Թանուկեան) դաշտին մէջ (Մըլիքի), կը ճակատի Միլիարայի դէմ:

Վստահաբար բոլորին մտքին մէջ տակաւին թարմ է Հ. Մ. Ը. Մ.ի տղոց կատարած վերջին բարեկամական մրցումը՝ եգիպտական Ժեյրա Վորաւոր խումբին դէմ, որ արաբական աշխարհի ախոյեանն է:

Հ. Մ. Ը. Մ.ի համակիրները շատ աւելի մօտէն ծանօթանալու համար իրենց կազմին մարզիկներուն եւ սմրան ընթացքին անոնց կատարած փորձերուն ու աշխատանքներուն, այսօր ժամադրուած են Հ. Մ. Ը. Մ.ի դաշտը, ախոյեանութեան մրցումներուն շուրջ նախաձեռնող մը ունենալու համար:

ՊԵԼՃԻՔԱՅԻ, ՍԿՈՎՏԻՈՅ ԵՒ ՓՈՐԹՈՒԳԱԼԻ ԱՍՈՅԵԱՆՈՒԹԻՆ

Պելճիքայի ֆուտբոլի ախոյեանութեան 11րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Ֆ. Ք. Պրիմ շարունակեց իր յաղթանակն ընթացքը եւ արձանագրեց եղանակի իր 11րդ յաջորդական յաղթանակը, քապահովելով առաւելագոյն 33 կէտեր:

Պրիմի վերջին «պոնտ» եղաւ Ռիսթերիօ, որ իր դաշտին վրայ 2-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց անկէ: Հիր կազմը իր կողերը նշանակեց 81րդ եւ 87րդ վայրկեաններուն:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Ֆ. Ք. Պրիմ այժմ չորս կէտի առաւելութիւն մը ունեցաւ անցեալ եղանակի ախոյեան Անտրիէթի վրայ, որ 8-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Լոքերէնը: Պրիմի նման Անտրիէթի կը մնայ երկրորդ կազմը, որ ցարդ պարտութիւն չէ կրած:

Մանչեսթըր Եունայթըտի դէմ («Չէմփրիսկ Լիկ») տեղի ունեցած մրցումին Անտրիէթի երկու կողերը նշանակած (2-1) քանադաճի Ռոմա Ռասփիլիքի Լոքերէնի դէմ տեղի ունեցած մրցումին նշանակեց չորս կոլ:

Ստորեւ՝ 11րդ

հանգրուանի մրցումներուն արդիւնքները. Միւլէրս - Սթաւտար Լիեմ 1-2

Հարելպէք - Ասլար 2-4

Ռիսթերիօ - Ֆ. Ք. Պրիմ 0-2

Շարլոտա - Լա Լուվիէր 2-1

Պելերէն - Ժերմինայ 2-1

Սէնթ Թրիտրան - Մեքքլէն 1-0

Անտրիէթ - Լոքերէն 8-0

Կէնք - Լա Կանթուայ 1-1

Լիերս - Մուսթրոն 1-4

ԳԱՍԱՌՈՐՈՒՄ

1.- Ֆ. Ք. Պրիմ 33

2.- Անտրիէթ 29

3.- Մուսթար Լիեմ 25

4.- Շարլոտա 21

5.- Մուսթրոն 19

17.- Լա Լուվիէր 6

18.- Մեքքլէն 5

ՍԿՈՎՏԻՈՅ ֆուտբոլի ախոյեանութեան 13րդ հանգրուանի մրցումներուն, անցեալ եղանակի եւրոպական յաղթանակի վերջին տարիներու ախոյեան Ռեյնոլդսը իր դաշտին վրայ 3-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Քիլմարնոքէն. անիկա կը կրէր յաջորդական իր երրորդ պարտութիւնը: Շուրջ 50 հազար համակիրներու ներկայութեան, Քիլմարնոք Բոքար (Տրոյ), Կէրի Հոլթ (ՅՐԿ)

եւ Արթիւր Նուան (67րդ) սխալմամբ իր բերդէն ներս) նշանակեցին Քիլմարնոքի կոլերը:

Իր կրած այս պարտութիւնէն ետք (չորրորդը այս եղանակին), Ռեյնոլդսը այժմ 13 կէտով ետ կը մնայ պարագլուխի դիրքը գրաւող Սեյթիքէն. որ հակառակ Մատրիէի հետ իր արձանագրած հաւասարութեան (3-3), ցարդ կը մնայ միակ անպարտելի կազմը:

Սեյթիք նոյնիսկ կրնայ յաղթական վերադառնալ Մատրիէի դաշտէն, եթէ օրուան իրաւաբարձ չհուճախ չեղեալ չհամարէր Եոհան Միալպայի նշանակած կոլը (61րդ), որ վիստօնի հետ վրայ դիտելէն ետք, ի յայտ եկած էր, թէ գնդակը բերդին գիծէն ներս մուտք գործած էր:

Վերջին դիրքը «գրաւող» Տանտի Եունայթըտ, որ իր դաշտին վր

